Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-1168-17.10.2025-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«1) անհատական ծանուցում՝ անձին սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով տրամադրվող տեղեկատվություն.».

2) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«2) հրապարակային ծանուցում՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված տեղեկատվություն.».

3) 4-րդ կետում «գտնվող» բառերից հետո լրացնել «, և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող» բառերը.

4) 6-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

5) 7-րդ կետի «ա» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«ա. ֆիզիկական անձի դեպքում՝ անձի կողմից իր անձնական տվյալներին և փաստաթղթերին, ինչպես նաև հանրային ծառայությունների վերաբերյալ ծանուցումներին հասանելիություն ապահովելու նպատակով ստեղծված թվային միջավայր, որին մուտքն ապահովվում է անձի խիստ նույնականացման հարթակի միջոցով,»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասից հանել «և կայքը վարող անձին փոխանցելու» բառերը.

2) 8-րդ մասում «կայքը վարող անձը» բառերը փոխարինել «գործակալությունը» բառով.

3) լրացնել նոր 9-11-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Եթե կայքում հրապարակային ծանուցման հետ մեկտեղ պետք է տեղադրվի փաստաթուղթ, ապա այն ներկայացվում է ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով:

10. Հրապարակային ծանուցման տեքստը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է կայքում:

11. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպես նաև նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակվելու նոտարական գործողության ընթացքում հրապարակվող հրապարակային ծանուցումը հրապարակվում է կայքում անմիջապես այն ստանալու պահից:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 7. Անհատական և հրապարակային ծանուցման համար գանձվող պետական տուրքը

1. Անհատական ծանուցման տեղադրման համար գանձվում է պետական տուրք, բացառությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղադրվող ծանուցումների:

2. Հրապարակային ծանուցման տեղադրման համար գանձվում է պետական տուրք, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով, 5-րդ հոդվածի 11-րդ մասով, ինչպես նաև 10-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի:»:

Հոդված 6. Օրենքի 8-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 7. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 10. Էլեկտրոնային եղանակով ծանուցումների իրականացումը**

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական և իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին կարող են ծանուցել սույն հոդվածով սահմանված կարգով: Եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը ֆիզիկական և իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին ծանուցել է սույն հոդվածով սահմանված կարգով, ապա անձը համարվում է պատշաճ ծանուցված:

2. Այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որը միացել է հանրային տեղեկությունների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված տվյալների փոխանակման շերտին, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին կարող է ծանուցել սույն հոդվածով սահմանված կարգով: Եթե անձը ծանուցվել է սույն հոդվածով սահմանված կարգով, ապա համարվում է պատշաճ ծանուցված:

3. Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծանուցումն իրականացվում է անհատական ծանուցումը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տեղադրելու միջոցով: Եթե անհատական ծանուցմանը կից պետք է ուղարկվի փաստաթուղթ, ապա

այն ուղարկվում է ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով, իսկ այդ հնարավորության բացակայության դեպքում՝ փաստաթուղթը կցվում է ծանուցմանը: Ծանուցումը տեղադրելը, անձի կողմից համակարգի անձնական էջ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից: Ծանուցման տեղադրման մասին տվյալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը տեղեկացվում է նաև իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով: Եթե իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը ուղարկված ծանուցումը տեղադրվելուց երեք օր հետո բացակայում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով: Հրապարակային ծանուցման մեջ նշվում են ծանուցողի և ծանուցվող անձի տվյալները, ինչպես նաև տեղադրվում է հղում, որը միջոցով անձը, անցնելով նույնականացում, կարող է ծանոթանալ ծանուցման տեքստին և առկայության դեպքում՝ կից փաստաթղթերին: Հրապարակային ծանուցումը պարունակում է նաև տեղեկատվություն այն մասին, թե երբ է անձին ուղարկվել ծանուցումը հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով: Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ մուտք գործելու օրվանից՝ անկախ իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով ստացված տեղեկացումից, եթե այդպիսին առկա է, իսկ հրապարակային ծանուցման դեպքում իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում ծանուցումը տեղադրվելու օրվանից հետո՝ հինգերորդ օրը:

4. Եթե իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը կասեցվել է կամ Հարկային օրենսգրքի իմաստով գործունեությունը դադարեցվել է, ապա անհատական ծանուցումը սույն հոդվածով սահմանված կարգով ուղարկվում է իրավաբանական անձի դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարին (կոլեգիալության դեպքում գործադիր մարմնի բոլոր անդամներին), իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձին:

5. Ֆիզիկական անձի ծանուցումն իրականացվում է անհատական ծանուցումը անձի պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրելու միջոցով: Եթե անհատական ծանուցմանը կից պետք է ուղարկվի փաստաթուղթ, ապա այն ուղարկվում է ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով, իսկ այդ հնարավորության բացակայության դեպքում՝ փաստաթուղթը կցվում է ծանուցմանը: Ծանուցումը տեղադրելը, ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից: Ծանուցման մասին տվյալ ֆիզիկական անձը տեղեկացվում է նաև իր կողմից տրամադրված հավելյալ

էլեկտրոնային փոստի հասցեով, ինչպես նաև կարող է տեղեկացվել իր կողմից տրամադրված կամ իրեն պատկանող խիստ նույնականացման միջոցներին փոխկապակցված հեռախոսահամարին ուղարկված հաղորդագրությամբ: Ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու օրվանից՝ անկախ իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով կամ հեռախոսահամարին ստացված տեղեկացումից, եթե այդպիսին առկա է:

6. Եթե ֆիզիկական անձին ուղարկված ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելուց երեք օր հետո բացակայում է ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումը «Փոստային կապի մասին» օրենքով սահմանված հիբրիդային առաքանու միջոցով պատվիրված նամակով ուղարկվում է անձի հաշվառման հասցեով: Ընդ որում, ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով ուղարկված ծանուցման դեպքում ապահովվում է հղման ներքո գտնվող տեղեկատվության հասանելիությունը փոստային կապի օպերատորին: Եթե գործի (վարույթի) նյութերից հետևում է, որ անձը գտնվում է ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժական հիմնարկում ստանում է ստացիոնար բուժում կամ ոչ հոժարակամ հոսպիտալացվել է, ապա պատվիրված նամակն անձին ուղարկվում է այդ հաստատությունների հասցեներով:

7. Փոստային պատվիրված նամակը ֆիզիկական անձին ուղարկելուց յոթ օր հետո, եթե բացակայում է նամակը հանձնված լինելը հաստատող փաստաթղթային կամ էլեկտրոնային հավաստումը, այդ թվում՝ երբ ֆիզիկական անձը հրաժարվում է փոստային պատվիրված նամակը ստանալուց, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով: Փոստային պատվիրված նամակն ստանալուց հրաժարումը գրավոր արձանագրվում է փոստային պատվիրված նամակը հանձնող անձի կողմից՝ նշելով հրաժարման օրը, ամիսը, տարին և ժամը:

8. Հրապարակային ծանուցման մեջ նշվում են ծանուցողի և ծանուցվող անձի տվյալները, ինչպես նաև տեղադրվում է հղում, որի միջոցով անձը, անցնելով նույնականացում, կարող է ծանոթանալ ծանուցման տեքստին և առկայության դեպքում՝ կից փաստաթղթերին: Հրապարակային ծանուցումը պարունակում է նաև տեղեկատվություն այն մասին, թե երբ է անձին ուղարկվել ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստի և փոստային պատվիրված նամակի միջոցով: Սույն մասով սահմանված հրապարակային ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում տեղադրվելու օրվանից հետո՝ յոթերորդ օրը, ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված:

9. Եթե առկա է ֆիզիկական անձի կողմից տրված գրավոր համաձայնություն կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով տրված համաձայնություն կամ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված՝ բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային հաղորդակցության միջոցում տրված համաձայնություն,

որով հստակ հավաստվում է, որ անձը համաձայն է ծանուցումները ստանալ բացառապես իր պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, ապա ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելու օրվան հաջորդող երրորդ օրվանից՝ անկախ պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու կամ ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստման առկայությունից և առանց սույն հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված գործողությունները կատարելու, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի (վարույթի) նյութերից հետևում է, որ անձը գտնվում է ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժական հիմնարկում ստանում է ստացիոնար բուժում կամ ոչ հոժարակամ հոսպիտալացվել է:

10. Անհատական և հրապարակային ծանուցումը տեղադրելու, ծանուցումը տեղադրելու մասին անձին տեղեկացնելու, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ և պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվելու, ծանուցման հետ ցանկացած գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկությունները հաշվառելու (լոգավորման) և լոգերը պահպանելու կարգը սահմանում է Կառավարությունը:

11. Ֆիզիկական անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի տեխնոլոգիական լուծումները պետք է ապահովեն սույն հոդվածով սահմանված կարգով ուղարկվող ծանուցումների միաժամանակ տեղադրում՝

1) հանրային տեղեկությունների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների մուտքի միասնական հարթակի միջոցով տվյալների սուբյեկտին իր անձնական տվյալներին և փաստաթղթերին, ինչպես նաև հանրային ծառայությունների վերաբերյալ ծանուցումներին հասանելիություն ապահովելու նպատակով ստեղծված թվային միջավայրում,

2) անձի կողմից «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված կարգով բնակչության պետական ռեգիստրի տվյալների սուբյեկտի կողմից մուտքագրված, բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային հաղորդակցության միջոցում:

12. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ծանուցումները իրականացվում են պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, եթե այլ՝ էլեկտրոնային ծանուցման կարգ նախատեսված չէ օրենքով կամ այդ մարմինների միջև առկա չէ էլեկտրոնային հաղորդակցության այլ կարգ:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասն ուժի մեջ է մտնում «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված կարգով բնակչության պետական ռեգիստրի տվյալների սուբյեկտի կողմից մուտքագրված, բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային հաղորդակցության միջոցը լրացնելու տեխնիկական հնարավորությունը գործարկելու պահից:

Առաջին ընթերցում

Կ-1168-17.10.2025-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«1) անհատական ծանուցում՝ անձին սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով տրամադրվող տեղեկատվություն.».

2) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«2) հրապարակային ծանուցում՝ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված տեղեկատվություն.».

3) 4-րդ կետում «գտնվող» բառերից հետո լրացնել «, և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող» բառերը.

4) 6-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

5) 7-րդ կետի «ա» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«ա. ֆիզիկական անձի դեպքում՝ անձի կողմից իր անձնական տվյալներին և փաստաթղթերին, ինչպես նաև հանրային ծառայությունների վերաբերյալ ծանուցումներին հասանելիություն ապահովելու նպատակով ստեղծված թվային միջավայր, որին մուտքն ապահովվում է անձի խիստ նույնականացման հարթակի միջոցով,»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված ~~2~~3. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասից հանել «և կայքը վարող անձին փոխանցելու» բառերը.

2) 8-րդ մասում «կայքը վարող անձը» բառերը փոխարինել «գործակալությունը» բառով.

3) լրացնել նոր 9-11-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Եթե կայքում հրապարակային ծանուցման հետ մեկտեղ պետք է տեղադրվի փաստաթուղթ, ապա այն ներկայացվում է ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով:

10. Հրապարակային ծանուցման տեքստը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է կայքում:

11. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպես նաև նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակվելու նոտարական գործողության ընթացքում հրապարակվող հրապարակային ծանուցումը հրապարակվում է կայքում անմիջապես այն ստանալու պահից:»:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված ~~3~~5. ~~Օրենքի 7-րդ հոդվածում՝~~

~~վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«Հոդված 7. Անհատական և հրապարակային ծանուցման վճարը ».~~

~~2. 1-ին մասում «Կայքում» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգում և ֆիզիկական անձի պաշտոնական էլեկտրոնային փոստում անհատական ծանուցման, ինչպես նաև կայքում» բառերով.~~

Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 7. Անհատական և հրապարակային ծանուցման համար գանձվող պետական տուրքը

1. Անհատական ծանուցման տեղադրման համար գանձվում է պետական տուրք, բացառությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տեղադրվող ծանուցումների:

2. Հրապարակային ծանուցման տեղադրման համար գանձվում է պետական տուրք, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով, 5-րդ հոդվածի 11-րդ մասով, ինչպես նաև 10-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի:»:

Հոդված ~~4~~6. Օրենքի 8-րդ հոդվածը~~ում՝~~ ճանաչել ուժը կորցրած:

~~վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«Հոդված 8. Անհատական և հրապարակային ծանուցման վճարի դրույքաչափը ».~~

~~1-ին մասում՝~~

~~ա. «Հրապարակային» բառը փոխարինել «Անհատական և հրապարակային» բառերով.~~

~~բ. լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.~~

~~«Կայքում հրապարակվող հոման դեպքում հրապարակման համար վճարը ևս հաշվարկվում է տպագրական նիշերի հաշվարկով՝ սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված դրույքաչափերով:».~~

~~2-րդ մասից հանել «հրապարակային» բառը:~~

Հոդված ~~5~~7. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 10. Էլեկտրոնային եղանակով ծանուցումների իրականացումը**

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական և իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին կարող են ծանուցել սույն հոդվածով սահմանված կարգով: Եթե պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը ֆիզիկական և իրավաբանական անձանց ու անհատ ձեռնարկատերերին ծանուցել է սույն հոդվածով սահմանված կարգով, ապա անձը համարվում է պատշաճ ծանուցված:

2. Այն իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որը միացել է ~~«Հանրային տեղեկությունների մասին» օրենքով~~ հանրային տեղեկությունների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված տվյալների փոխանակման շերտին, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին կարող է ծանուցել սույն հոդվածով սահմանված կարգով: Եթե անձը ծանուցվել է սույն հոդվածով սահմանված կարգով, ապա համարվում է պատշաճ ծանուցված:

3. Իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ծանուցումն իրականացվում է անհատական ծանուցումը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջում տեղադրելու միջոցով: Եթե անհատական ծանուցմանը կից պետք է ուղարկվի փաստաթուղթ, ապա այն ուղարկվում է ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով, իսկ այդ հնարավորության բացակայության դեպքում՝ փաստաթուղթը կցվում է ծանուցմանը: Ծանուցումը տեղադրելը, անձի կողմից համակարգի անձնական էջ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից: Ծանուցման տեղադրման մասին տվյալ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը տեղեկացվում է նաև իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով: Եթե իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը ուղարկված ծանուցումը տեղադրվելուց երեք օր հետո բացակայում է հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով: Հրապարակային ծանուցման մեջ նշվում են ծանուցողի և ծանուցվող անձի տվյալները, ինչպես նաև տեղադրվում է հղում, որը միջոցով անձը, անցնելով նույնականացում, կարող է ծանոթանալ ծանուցման տեքստին և առկայության դեպքում՝ կից փաստաթղթերին: Հրապարակային ծանուցումը պարունակում է նաև տեղեկատվություն այն մասին, թե երբ է անձին ուղարկվել ծանուցումը հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի միջոցով: Իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ մուտք գործելու օրվանից՝ անկախ իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով

ստացված տեղեկացումից, եթե այդպիսին առկա է, իսկ հրապարակային ծանուցման դեպքում իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համարվում է պատշաճ ծանուցված Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում ծանուցումը տեղադրվելու օրվանից հետո՝ հինգերորդ օրը:

4. Եթե իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը կասեցվել է կամ Հարկային օրենսգրքի իմաստով գործունեությունը դադարեցվել է, ապա անհատական ծանուցումը սույն հոդվածով սահմանված կարգով ուղարկվում է իրավաբանական անձի դեպքում՝ գործադիր մարմնի ղեկավարին (կոլեգիալության դեպքում գործադիր մարմնի բոլոր անդամներին), իսկ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում որպես անհատ ձեռնարկատեր գրանցված ֆիզիկական անձին:

5. Ֆիզիկական անձի ծանուցումն իրականացվում է անհատական ծանուցումը անձի պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրելու միջոցով: Եթե անհատական ծանուցմանը կից պետք է ուղարկվի փաստաթուղթ, ապա այն ուղարկվում է ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով, իսկ այդ հնարավորության բացակայության դեպքում՝ փաստաթուղթը կցվում է ծանուցմանը: Ծանուցումը տեղադրելը, ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվում է էլեկտրոնային համակարգի կողմից: Ծանուցման մասին տվյալ ֆիզիկական անձը տեղեկացվում է նաև իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով, ինչպես նաև կարող է տեղեկացվել իր կողմից տրամադրված կամ իրեն պատկանող խիստ նույնականացման միջոցներին փոխկապակցված հեռախոսահամարին ուղարկված հաղորդագրությամբ: Ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու օրվանից՝ անկախ իր կողմից տրամադրված հավելյալ էլեկտրոնային փոստի հասցեով կամ հեռախոսահամարին ստացված տեղեկացումից, եթե այդպիսին առկա է:

6. Եթե ֆիզիկական անձին ուղարկված ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելուց երեք օր հետո բացակայում է ֆիզիկական անձի կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու վերաբերյալ էլեկտրոնային հավաստումը, ապա ծանուցումը «Փոստային կապի մասին» օրենքով սահմանված հիբրիդային առաքանու միջոցով պատվիրված նամակով ուղարկվում է անձի հաշվառման հասցեով: Ընդ որում, ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով ուղարկված ծանուցման դեպքում ապահովվում է հղման ներքո գտնվող տեղեկատվության հասանելիությունը փոստային կապի օպերատորին: Եթե գործի (վարույթի) նյութերից հետևում է, որ անձը գտնվում է ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժական հիմնարկում ստանում է ստացիոնար բուժում կամ ոչ հոժարակամ հոսպիտալացվել է, ապա պատվիրված նամակն անձին ուղարկվում է այդ հաստատությունների հասցեներով:

7. Փոստային պատվիրված նամակը ֆիզիկական անձին ուղարկելուց յոթ օր հետո, եթե բացակայում է նամակը հանձնված լինելը հաստատող փաստաթղթային կամ էլեկտրոնային հավաստումը, այդ թվում՝

երբ ֆիզիկական անձը հրաժարվում է փոստային պատվիրված նամակը ստանալուց, ապա ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով: Փոստային պատվիրված նամակն ստանալուց հրաժարումը գրավոր արձանագրվում է փոստային պատվիրված նամակը հանձնող անձի կողմից՝ նշելով հրաժարման օրը, ամիսը, տարին և ժամը:

8. Հրապարակային ծանուցման մեջ նշվում են ծանուցողի և ծանուցվող անձի տվյալները, ինչպես նաև տեղադրվում է հղում, որի միջոցով անձը, անցնելով նույնականացում, կարող է ծանոթանալ ծանուցման տեքստին և առկայության դեպքում՝ կից փաստաթղթերին: Հրապարակային ծանուցումը պարունակում է նաև տեղեկատվություն այն մասին, թե երբ է անձին ուղարկվել ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստի և փոստային պատվիրված նամակի միջոցով: Սույն մասով սահմանված հրապարակային ծանուցումը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում տեղադրվելու օրվանից հետո՝ յոթերորդ օրը, ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված:

9. Եթե առկա է ֆիզիկական անձի կողմից տրված գրավոր համաձայնություն կամ պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով տրված համաձայնություն կամ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված՝ ~~նույնականացման քարտի ու~~ բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային հաղորդակցության միջոցում տրված համաձայնություն, որով հստակ հավաստվում է, որ անձը համաձայն է ծանուցումները ստանալ բացառապես իր պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, ապա ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելու օրվան հաջորդող երրորդ օրվանից՝ անկախ պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու կամ ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստման առկայությունից և առանց սույն հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված գործողությունները կատարելու, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի (վարույթի) նյութերից հետևում է, որ անձը գտնվում է ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժական հիմնարկում ստանում է ստացիոնար բուժում կամ ոչ հոժարակամ հոսպիտալացվել է:

10. Անհատական և հրապարակային ծանուցումը տեղադրելու, ծանուցումը տեղադրելու մասին անձին տեղեկացնելու, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային մարմնի հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային կառավարման համակարգի անձնական էջ և պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելը և ծանուցումը կարդալը հավաստվելու, ծանուցման հետ ցանկացած գործողություն կատարելու վերաբերյալ տեղեկությունները հաշվառելու (լոգավորման) և լոգերը պահպանելու կարգը սահմանում է Կառավարությունը:

11. Ֆիզիկական անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի տեխնոլոգիական լուծումները պետք է ապահովեն սույն հոդվածով սահմանված կարգով ուղարկվող ծանուցումների միաժամանակ տեղադրում՝

1) «Հանրային տեղեկությունների մասին» օրենքով հանրային տեղեկությունների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված տեղեկությունների մուտքի միասնական հարթակի միջոցով տվյալների սուբյեկտին իր անձնական տվյալներին և փաստաթղթերին, ինչպես նաև հանրային ծառայությունների վերաբերյալ ծանուցումներին հասանելիություն ապահովելու նպատակով ստեղծված թվային միջավայրում,

2) անձի կողմից «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված կարգով բնակչության պետական ռեգիստրի տվյալների սուբյեկտի կողմից մուտքագրված, նույնականացման քարտի ու բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային հաղորդակցության միջոցում:

12. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև ծանուցումները իրականացվում են պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, եթե այլ՝ էլեկտրոնային ծանուցման կարգ նախատեսված չէ օրենքով կամ այդ մարմինների միջև առկա չէ էլեկտրոնային հաղորդակցության այլ կարգ:

Հոդված 8. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

3. Սույն օրենքի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասն ուժի մեջ է մտնում «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված կարգով բնակչության պետական ռեգիստրի տվյալների սուբյեկտի կողմից մուտքագրված, բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային հաղորդակցության միջոցը լրացնելու տեխնիկական հնարավորությունը գործարկելու պահից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ԻՆՏԵՐՆԵՏՈՎ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1168-17.10.2025-ՊԻ-011/0), ««ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1168[25]-17.10.2025-ՊԻ-011/0), ««ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1168[8]-17.10.2025-ՊԻ-011/1), ««ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1168[9]-17.10.2025-ՊԻ-011/1), ««ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» (Կ-1168[7]-17.10.2025-ՊԻ-011/1), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1168[10]-17.10.2025-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն երն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Համապատասխանաբար փոփոխելով մասերի համարակալումը՝ նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր՝ 3-րդ և 4-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ. «3) 4-րդ կետում «գտնվող կայք» բառերից հետո լրացնել «, և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող» բառերը.	Ընդունվել է:	Ընդունվել է:

			4) 6-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.»: Առաջարկվում է մատնանշել կայքի վարումն իրականացնող սուբյեկտին կայքի հասկացության մեջ, ինչպես նաև հանել «կայքը վարող անձ» հասկացությունը:		
2.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Լրացնել նոր՝ 2-րդ հոդվածը հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:», և ըստ դրա՝ փոփոխել բոլոր հաջորդող հոդվածների համարակալումը: **«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է, որ կայքի վարման և տեխնիկական սպասարկման ծառայությունները մատուցում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, որպիսի իրավադրույթ ըստ էության առաջարկվում է սահմանել նույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում, հետևաբար այլևս բացակայում է 4-րդ հոդվածի գործողության, և ըստ դրա՝ կրկնության անհրաժեշտությունը:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու**	3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 3.** Օրենքի 5-րդ հոդվածում՝ 1) 5-րդ մասից հանել «և կայքը վարող անձին փոխանցելու» բառերը.	Ընդունվել է:	Ընդունվել է:

		մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	2) 8-րդ մասում «կայքը վարող անձը» բառերը փոխարինել «գործակալությունը» բառով. 3) լրացնել նոր 9-11-րդ մասերով՝ հետևյալ բովանդակությամբ. «9. Եթե կայքում հրապարակային ծանուցման հետ մեկտեղ պետք է տեղադրվի փաստաթուղթ, ապա այն ներկայացվում է ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով: 10. Հրապարակային ծանուցման տեքստը ստանալու պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղադրվում է կայքում: 11. Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, ինչպես նաև նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով կարգադրություն արձակվելու նոտարական գործողության ընթացքում հրապարակվող հրապարակային ծանուցումը հրապարակվում է կայքում անմիջապես այն ստանալու պահից:»:»: Փոփոխվող և լրացվող օրենքից «կայքը վարող անձ» հասկացությունը հանվելու վերաբերյալ առաջարկն ընդունվելու պարագայում առաջարկվում է նաև հանել այդ հասկացությունն օրենքի տեքստից, ինչպես նաև նախատեսել, որ հրապարակային ծանուցումը տեղադրող սուբյեկտ հանդիսանա Հայաստանի Հանրապետության արդարադատության		

			նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը: Նպատակահարմար է նաև նույն հոդվածի շրջանակներում կարգավորել ծանուցման հրապարակման ժամկետները:		
4.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված**	4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 4.** Օրենքի 6-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:»: Նախորդ առաջարկն ընդունվելու պարագայում «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 6-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումներն արդեն իսկ ըստ էության վերարտադրվելու են նույն օրենքի 5-րդ հոդվածում կատարվելիք լրացումների և փոփոխությունների արդյունքում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված**	5-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 7.** Անհատական և հրապարակային ծանուցման համար գանձվող պետական տուրքը 1. Անհատական ծանուցման տեղադրման համար գանձվում է պետական տուրք, բացառությամբ պետական կամ տեղական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			ինքնակառավարման մարմինների կողմից տեղադրվող ծանուցումների: 2. Հրապարակային ծանուցման տեղադրման համար գանձվում է պետական տուրք, բացառությամբ սույն օրենքի 3-րդ հոդվածով, 5-րդ հոդվածի 11-րդ մասով, ինչպես նաև 10-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ մասերով նախատեսված դեպքերի»:»: Առաջարկվում է, որ անհատական և հրապարակային ծանուցման համար գանձվի պետական տուրք, սակայն դրանից ազատված լինեն որոշակի մարմիններ սահմանված դեպքերում՝ պահպանելով նաև գործող կարգավորումների որոշ դրույթները:		
6.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված**	6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 6.** Օրենքի 8-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:»: Նկատի ունենալով, որ համապատասխան վճարների հետ կապված հարաբերություններն ըստ էության առաջարկվում է կարգավորել «Պետական տուրքի մասին» օրենքով, 8-րդ հոդվածի կարգավորման անհրաժեշտությունն այլևս բացակայում է:	Ընդունվել է:	Ընդունվել է:

7.	***ՀՀ Կառավարություն***	**«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում**	Նախագծի տեքստում «Հանրային տեղեկությունների մասին օրենքով» բառերը փոխարինել «հանրային տեղեկությունների ոլորտը կարգավորող օրենսդրությամբ» բառերով: «Հանրային տեղեկությունների մասին» վերտառությամբ օրենք տվյալ պահին չի գործում, ուստի նպատակահարմար է իրավանորմում օգտագործել նկարագրական տարբերակը՝ «հանրային տեղեկությունների ոլորտը կարգավորող օրենսդրություն»:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	***ՀՀ Կառավարություն***	**«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող՝ 10-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ նախադասությունում լրացնել «, ինչպես նաև կարող է տեղեկացվել իր կողմից տրամադրված կամ իրեն պատկանող խիստ նույնականացման միջոցներին փոխկապակցված հեռախոսահամարին ուղարկված հաղորդագրությամբ» բառերը: Համապատասխանաբար՝ լրացնել հաջորդող նախադասությունում «հասցեով» բառից հետո «կամ հեռախոսահամարին» բառերը: Առաջարկվում է նախատեսել հնարավորություն՝ նաև ծանուցելու ֆիզիկական անձին վերջինիս հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու միջոցով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

9.	***ՀՀ Կառավարություն***	**«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող՝ 10-րդ հոդվածի 6-րդ մասը առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Ընդ որում, ծանուցողի կողմից վերահսկվող սերվերում տեղադրված հղման միջոցով ուղարկված ծանուցման դեպքում ապահովվում է հղման ներքո գտնվող տեղեկատվության հասանելիությունը փոստային կապի օպերատորին:»: Անհրաժեշտ է տրամադրել տեղադրված հղման հասանելիությունը փոստային կապի օպերատորին՝ ծանուցումը «Փոստային կապի մասին» օրենքով սահմանված հիբրիդային առաքանու միջոցով կազմակերպելու համար:	Ընդունվել է:	Ընդունվել է:
10.	***ՀՀ Կառավարություն***	**«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող՝ 10-րդ հոդվածի 8-րդ մասում «որը» բառը փոխարինել «որի» բառով: Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող՝ 10-րդ հոդվածի 8-րդ մասում «որը» բառն ըստ էության վրիպակի արդյունք է, և անհրաժեշտ է այն փոխարինել նույն բառի սեռական հոլովաձևով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

11.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող՝ 10-րդ հոդվածի 9-րդ մասում, ինչպես նաև 11-րդ մասի 2-րդ կետում «նույնականացման քարտի ու» բառերը փոխարինել «բնակչության պետական ռեգիստրում» բառերով: Թվային հաղորդակցության միջոցը փոխկապակցված է լինելու միայն բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայությունների համարանիշի հետ, հետևաբար անհրաժեշտ է հանել կարգավորումը, որի համաձայն՝ այն փոխկապակցված է լինելու նաև նույնականացման քարտի հետ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
12.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող՝ 10-րդ հոդվածի 9-րդ մասում «կատարելու» բառից հետո լրացնել հետևյալ բառերը՝ «, բացառությամբ այն դեպքերի, երբ գործի (վարույթի) նյութերից հետևում է, որ անձը գտնվում է ազատազրկման վայրում, զորամասում, կարգապահական գումարտակում, բուժական հիմնարկում ստանում է ստացիոնար բուժում կամ ոչ հոժարակամ հոսպիտալացվել է:»: Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող՝ 10-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ եթե անձը համաձայն է ծանուցումները ստանալ բացառապես իր պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով, ապա ֆիզիկական անձը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը պաշտոնական էլեկտրոնային փոստում տեղադրվելու	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրվան հաջորդող երրորդ օրվանից՝ անկախ պաշտոնական էլեկտրոնային փոստ մուտք գործելու կամ ծանուցումը կարդալու մասին էլեկտրոնային հավաստման առկայությունից և առանց նույն հոդվածի 6-8-րդ մասերով սահմանված գործողությունները կատարելու, սակայն պետք է հաշվի առնել, որ պրակտիկայում կարող են առաջանալ այնպիսի իրավիճակներ, երբ անձը տված լինի այդպիսի համաձայնություն, սակայն, օրինակ, հոսպիտալացվի, որպիսի դեպքը (նմանատիպ դեպքերը) պետք է համարվի բացառություն վերը նշված կանոնից:		
13.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի 7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով փոփոխվող՝ 10-րդ հոդվածի 10-րդ մասում «տեղադրելու» բառից հետո լրացնել «, ծանուցումը տեղադրելու մասին անձին տեղեկացնելու» բառերը: Առաջարկվում է, որ ծանուցումը տեղադրելու մասին անձին տեղեկացնելու ընթացակարգը կարգավորվի Կառավարության որոշմամբ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
14.	***ՀՀ Կառավարություն***	**««Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում**	լրացնել նոր 8-րդ հոդվածը հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 8.** Եզրափակիչ մաս և անցումային դրույթ 1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: 2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում	Ընդունվել է:	Ընդունվել է:

			են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում: 3. Սույն օրենքի 6-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասն ուժի մեջ է մտնում «Բնակչության պետական ռեգիստրի մասին» օրենքով սահմանված կարգով բնակչության պետական ռեգիստրի տվյալների սուբյեկտի կողմից մուտքագրված, բնակչության պետական ռեգիստրում հանրային ծառայությունների համարանիշի հետ փոխկապակցված թվային հաղորդակցության միջոցը լրացնելու տեխնիկական հնարավորությունը գործարկելու պահից:» Նախագծից բացակայում են անցումային և եզրափակիչ դրույթները:		
15.	***ՀՀ Կառավարություն***	**«Կատարողական վարույթի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 1.** «Կատարողական վարույթի մասին» 2024 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-179-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի՝ 1-ին մասում 1) 1-ին մասի 1-ին կետը «հարթակով» բառից հետո լրացնել «կամ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերով. 2) 2-րդ մասում «սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով» բառերը փոխարինել «անձնական գրասենյակ հարթակով կամ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով» բառերով:» Առաջարկվում է, որ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով ծանուցման իրականացումը յուրաքանչյուր դեպքում լինի հնարավոր այլընտրանք վարչական մարմնի համար:		
16.	***ՀՀ Կառավարություն***	**««Կատարողական վարույթի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր**	Վերը նշված առաջարկն ընդունվելու պարագայում անհրաժեշտ է նաև կատարել փոփոխություն օրենքի վերնագրում, մասնավորապես՝ **«ԼՐԱՑՈՒՄՆԵՐ»** բառից հետո լրացնել **«ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ»** բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
17.	***ՀՀ Կառավարություն***	**««Կատարողական վարույթի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «**Հոդված 2.** Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասում՝ 1) «սույն գլխով» բառերից հետո լրացնել «կամ Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով» բառերը. 2) լրացնել նոր 6-րդ կետ հետևյալ բովանդակությամբ. «6) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով ծանուցվելու դեպքում՝ այդ օրենքով սահմանված ժամկետներում»:	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Բացակայում է անհրաժեշտություն՝ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասում լրացնելու «տեղադրվել» բառը, ինչպես նաև առաջարկվում է հստակեցնել, որ քննարկվող օրենքի իմաստով պատշաճ ծանուցում է համարվում հատկապես «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կատարված ծանուցումը՝ համապատասխան ժամկետում:		
18.	***ՀՀ Կառավարություն***	**«Լիցենզավորման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում հանել «ՀՀ» հապավումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
19.	***ՀՀ Կառավարություն***	**«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Նախագծի 1-ին հոդվածում հանել «ՀՀ» հապավումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
20.	***ՀՀ Կառավարություն***	**«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի**	Նախագծի տեքստից հանել «ՀՀ» հապավումները՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

		պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում			
21.	***ՀՀ Կառավարություն***	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	1-ին հոդվածի 1-ին մասում հանել «(այսուհետ՝ Օրենսգիրք)» բառերը՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Օրենսգիրք» կրճատ տարբերակն այդ նախագծում չի կիրառվում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
22.	***ՀՀ Կառավարություն***	**Նախագծերի փաթեթում**	լրացնել նոր ««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը հետևյալ բովանդակությամբ. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասում՝ 1) «ժե» պաբերության վերջին նախադասության «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով. 2) լրացնել նոր «ժզ» պարբերությունը հետևյալ բովանդակությամբ.	Ընդունվել է:	Ընդունվել է:

			«ժզ) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված անհատական և հրապարակային ծանուցումների համար:»: **Հոդված 2.** Օրենքի 8-րդ հոդվածում ««ժե» պարբերությամբ սահմանված՝ պետական տուրքի գանձման օբյեկտի» բառերը փոխարինել ««ժե» և «ժզ» պարբերություններով սահմանված՝ պետական տուրքի գանձման օբյեկտների:» բառերով: **Հոդված 3.** Օրենքը լրացնել նոր 20.5-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 20.5. «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված անհատական և հրապարակային ծանուցումների համար պետական տուրքի դրույքաչափերը 1. «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված անհատական և հրապարակային ծանուցումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. 1) Անհատական ծանուցման համար ա) տեքստի դեպքում յուրաքանչյուր տպագրական նիշի համար 0.05 դրամ, բայց ոչ պակաս 50 դրամից և ոչ ավելի 250 դրամից:		

			բ) էլեկտրոնային փաստաթղթի դեպքում յուրաքանչյուր կիլոբայթի համար 0.5 դրամ, բայց ոչ պակաս 100 դրամից և ոչ ավելի 500 դրամից: 2) Հրապարակային ծանուցման համար յուրաքանչյուր տպագրական նիշի համար՝ 10 դրամ, բայց ոչ պակաս 2000 դրամից և ոչ ավելի 100000 դրամից, իսկ «Հասարակական կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվետվության հրապարակման համար ոչ ավելի 5000 դրամից: 2. Անհատական ծանուցումը և՛ տեքստ, և՛ էլեկտրոնային փաստաթուղթ միաժամանակ պարունակելու դեպքում պետական տուրքը գանձվում է դրանցից յուրաքանչյուրի համար հաշվարկված պետական տուրքերի հանրագումարի չափով:»: **Հոդված 4.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապատասխան վճարների հետ կապված հարաբերություններն առաջարկվում է կարգավորել «Պետական տուրքի մասին» օրենքով:		